


ՏՆՕՐԷՆ-ԽԱՐԱԳԻՐ
 Ե. ՓՈՐՈՍԵԱՆ
 ՆԱՄԱԿ ԿԱՐ ՈՐ ԵՒ Ե ԳՐՈՒԹԻՒՆ
 ՊԵՏԻ Ե ՈՒՂՂՆԵՒ ԱՌ
 Խմբագր. ԱՐՇԱԼՈՍՑ Իրագրի
 ԳԱՂԻՐԷ (Հասարակական)



ՔԱՐԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
 ԵԳԻՊՏՈՍԻ ՇԱԲԱԹ
 Տարեկան, ողջ դահլիճ. 60
 Վեցամսեայ » 35
 ՕՏԱՐ ԵՐԿՐԱՆՈՐ
 Տարեկան Ֆրանկ 20
 Վեցամսեայ » 12

Rédaction du journal arménien
ARCHALOUICE
 HABBANIEH LE CAIRE (ÉGYPTÉ)

Լ Ր Ա Գ Ի Ր

ԱՉԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ՔԱՐԱՆՈՐԴԱԳՐՈՒ ԿԱՆԽԿ Ե
 ԵՒ ԹՂԹԱՏԱՐԻ ԾԱԽՔԸ
 Խմբագրութեան վրայ:
 Խմբագրութեան ուղղուած
 գրութիւնք եւ չ'են տրուիր:

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՑ ՄԷՋ

Եւրոպայի շատ մը զարգացած կեդ-
 ըններուն մէջ, ուր կառավարութիւնները
 հանրապարական կամ սահմանադրական
 ձև ունին, բացարձակ իրաւունք տրուած
 է ժողովուրդին զինքը վարելու կոչուած
 կառավարական գլխաւոր գործիչները իրեն
 ձայնով և հաւանութեամբ ընտրել, քուէ-
 ներու միջոցաւ: Այսպիսի ընտրութեանց
 տեղանակութիւնը այնչափ կը լինի, որչափ
 որ կը տրամագրէ ընտրող ժողովուրդին
 ձեռքը գտնուած օրինագիրքը:

Ընտրութեանց թուականը երբ կը մո-
 սանայ, ինքզինքնին ընտրելի ներկայացնող
 բոլոր թեկնածուները իրենց սպագայ գոր-
 ծունէութեան և հանրային օգտին վերա-
 բերող ինչ ինչ օգտակար ծրագիրներ պատ-
 ըստած, ուղղակի կամ իւրաքանչիւրը իր
 կողմէ ներկայացուցիչներու միջոցաւ կը ներ-
 կայացնեն հանրութեան ուշադրութեանը,
 որպէսզի հանրութիւնը իրեն օգտին ու դա-
 ջափարներուն նպատակաւ համարած ծրա-
 գրի հեղինակ թեկնածուին տայ իր քուէն:
 Այս գրութիւնը որչափ որ իր անպա-
 տեհութիւնները ունենայ ընտրելիին համար,
 որովհետեւ ինքզինքը ընտրելի ներկայաց-
 նելու հարկին ներքեւ է, սակայն նոյնչափ
 ալ օգտակար կը դառնայ ընտրողին համար,
 որ իր ամբիւն մէջ կ'ունենայ նպատակաւոր
 խոստումներով ի ծրագիր մը իբր պար-
 տամուրհակ, ընտրելիին կողմէ իրեն ձեռք
 տրուած:

Այն պարագային երբ ընտրեալը վար-
 չութեան զեկը ձեռք առնելով իրեն ներ-
 կայած ծրագրին դէմ կը մեղանչէ, զինքը
 ընտրող հանրութիւնը իրաւամբ կը մեղադրէ,
 խտաւր կը բողոքէ կատարուած զանցառու-
 թեան դէմ և եթէ իրեն ընտրած վարչը
 պատժելու մէջ սակաւ ինչ յառաջ երթալ
 ուզէ, իր գծագրութեան քուէն տարով
 պաշտօնազուրկ կը հռչակէ զայն, իսպառ
 վարչական գործերէ հեռի պահելու պայ-
 մանաւ:

Այսպիսիները հանրային կարծիքին
 առջեւ բարոյապէս մեռած կը համարուին
 այլ ևս, իբր իրենց ստորագրութիւնը և
 խոստումը չ'յարգողներ, հանրութեան գա-
 ւաճաններ և ի'նչ զասակարգի ալ որ պատ-
 պատկանին անտէր, պախարակելի են ընա-

կանարար և մինչև իրենց գ'ընդմանը կը
 կրեն այն սե գատակնիքը, որ հանրութիւնը
 զրոյշմեց իրենց ճակտին վրայ:

Ասոնց նման զարգացեալ կեդրոններու
 մէջ կիրարկուած օրինագրքերու հետեւող-
 թեամբ է, որ քառասուն տարիներ առաջ
 ծնունդ առած է հայերու ազգային Սահ-
 մանագրութիւնը. սակայն ո'րչափ տարիները
 անընդհատ իրարու յաջորդած են, ո'րչափ
 տոհմային զարգացումը դէպ յառաջ նշա-
 նակելի քայլեր առած է, հայերու սահմա-
 նագրական օրէնքներն զրեթէ միշտ մնա-
 ցած են իրենց խանձարուրին մէջ:

Հայը չէ՛ ուզած օրը օրին հետեւի իրեն
 ձեռքը տրուած Սահմագրութեան կրած
 փոփոխութիւններուն, չէ՛ ուզած առողջ
 մտքով դատել դարձուածոց իրաւացի և
 անիրաւ կողմերը, չէ՛ ուզած ուղղութեան
 մէջ պահել և նոյն իսկ կորովի ջանքեր
 ընելով հանրային անդ կարծիքով պատ-
 ժել ա'յն վարչական անհատներն, որոնց
 ոլորտապոյտ և ուղղամտութեան հակառակ
 քայլերն շատ աննպատակ և մանաւանդ քայ-
 քայլիչ հանգամանք մը ունեցած են ազգա-
 յին օրինաց ուժերը ջլատելու տեսակէտով:
 և աւելին կարելի է ըսել. հայ ազգային-
 ներէն հարիւրին հինգը հազիւ որոշ գա-
 զափար մը ունին թէ ի'նչ է Սահմանագ-
 րութիւնը. թէ վարչական գործոց մէջ իրենց
 իրաւանց սահմանը մինչև ո'ւր կ'երկարա-
 ձգի Սահմանագրութեան ուժով. թէ ի'նչ
 միջոցներ կ'ընձեռէ իրեն պարտազանց պաշ-
 տմեայն ի կարգ հրաւիրելու կամ պատ-
 ժելու համար. թէ ի'նչ պիտի արժէ ի մի
 բան իւր ձեռքով գրուած քուէն:

Գահիրէի ազգային վարչութիւնը այս
 օրեր քուէարկութեան կը հրաւիրէ հայ
 ժողովուրդը, ազգային Սահմանագրութեան
 տրամագրած օրէնքներու համաձայն: Ազ-
 գային սուրբ վճարելու առաջարկը, ինչ-
 պէս նաև երեք կամ հինգ տարիներու
 խնդիրը ընդհանրութեան կամքէն կախուած
 էրնդունիլ հաստատել կամ ոչ. հետեւարար
 Պատանակաւ լուծեալք միայն պատաս-
 խանելու չէ՛ եղած հրաւերին. այդօրինակ
 կոչ մը պէտք էր որ ամբողջ Գահիրէի
 հայ ժողովուրդը յնցելու և իրենց խորունկ
 թմրութեանէն արթնցնելու յատկութիւնը
 ունենար, բայց կը տեսնուի գծագրաբար
 թէ շատ անզոր ու աննշան շարժումներ մի-

այն կը տեսնուին անձուկ շրջանակի մը մէջ,
 այն ալ շուտով մարտնչապատարտուած
 թերեւս:

Մինչդեռ միւս կողմանէ ազգային վար-
 չութիւնը, որ մեծ ջանքերու մէջ է ջախջա-
 խելու Սահմանագրութեան ինչ ինչ տրա-
 մագրութիւններն, պիտի կատարէ առա-
 ջադրեալ ընտրութիւններն որոշեալ ժամա-
 նակին, Իեկա. 10, իր ուղած ու ծրագրած
 եղանակաւ և սպառնալիք ըլլալիք անօգուտ
 դիտողութեանց ալ օրինական պատասխան-
 ներ պատրաստած պէտք է ըլլայ:

Եթէ այժմէն հայ ժողովուրդը չ'հե-
 տաքքրուիկատարելի քուէարկութեան կա-
 ընոր հարցովը և իր անընաբարելի իրա-
 ւանց գործադրութիւնը չ'պահանջէ, ըստ
 մեզ շատ բան զոհած և մի օր ալ ստիպուած
 պիտի ըլլայ շատ աւելի դժուարութիւննե-
 րով ձեռք բերել ա'յն ինչ որ այժմ իրեն
 անտարբերութեամբ պիտի կորսնցնէ և ին-
 չ'ու իրաւունք չ'ունենանք մտածելու թէ
 քուէարկութիւնը դեռ հայ տարրին մէջ
 իր իսկական արժանիքովը ըմբռնուած չէ:

ՆԵԼՍՈՆ

ԿԵՍԱՐԱՅԻՆ ՅԵՐԿԻՆՍ

Օգտիլ առիթէն ի պատեհ ժամու
 Սօսիլ, է դա մի գործ յաջող մարդու:
 Թէևս կ'ըսեն թէ կեսարացի հայք,
 կարող չեն մանկ զբախտ երկնային.
 Սակայն անգամ մը կար մի անձ կոչեալ
 Բարսեղ . . . եան, ի Թալաս ծընեալ,
 Ընթող ութսուն տարու, անխիղճ վախառու
 նախութեան շորթող, առնող չը սուող,
 ժըլատ, ոսկեպաշտ, ունայն, մեծախօս,
 փըքուն անձնամոլ, սրտող, սրնապարծ,
 Մէկ խօսքով ըսենք էր մի կատարեալ
 Կեսարացի հայ: (1)

Օր մը վերջապէս, հասեալ ահա որ
 Վայրկեան, Գարբիէլ երեւցաւ խոժոռ,
 Եւ առեալ հողին տանէր անողոք,
 Ուղղակի գծիք:

Ճարտար մեղաւորն, երբ սետաւ ճամբան
 Թէ անցնին զբախտին զբրան առջեւէն,
 Խնդրեց, աղիւսեց, առ սուրը հըրհասակ
 Որպէսզի գոնէ մի անգամ գըննէն
 Ներս նայի տեսնէ: Գարբիէլ մերժեց,
 Բարսեղ թախանձեց, կրկնեց իւր աղերս,
 Երեքնեց այնչափ մեծ ազմուկ հանեց,
 Որ Պետրոս, Պօղոս դոնապանք կրկնեց
 Չայր լըսեցին, հարցուցին — Ի՞նչ է,
 — Գարբիէլ պարզեց Սուրբ առաքելոց

(1) Մեզի ծանօթ կեսարացիներուն շատերը
 այս թիփերէն չեն. միայն հայերէն թերթ չեն
 կարգար:

կնարկը Բարսեղի — Կեսարացի հոգիք
 Այստեղ գործ չունին, գոչեց առաքիալն
 Պետրոս սաստելով — Սակայն ես հայ եմ,
 Հայ քրիստոնեայ, դաւանիմ Յիսուս
 Ութսուն տարուան մէջ օր մը չուրացայ,
 Ինչ իրաւունքով դու որ ուրացար
 Երիցքս մըսնես եւ ես մընամ դուրս
 Պօղոս մէջ մըտաւ, ուզեց համոզել,
 Սակայն, դիմադրեց, յարեց անոր էլ
 — Դու որ կամէիր հալածել, ջնջել,
 Յիսուսի հիմնած Սուրբ եկեղեցին,
 Ինչպէ՞ս դու լինիս հոս, ես մընամ քաց
 Չայնէրն շատնալով, ամբոխ սուրբերուն
 Դուող կը վազէն, ճամարտակ Բարսեղ
 Գրանէ պատասխան, փաստէ ամենուն
 Յիշէ առ Դաւիթ, ոճիր սոսկալի
 Մահ Ուրիայի, նոյն իսկ Սպարտան
 Անուա իր բաժին երբ լիչէ անոր
 Վարած կեանք շուայս, ինն հարիւր կիներ,
 Մինչ ինք միակին ապրեցաւ զըման:
 Ահարօն կամի երկու խօսք ընել
 Իսկոյն ո կի հորթն, մէջտեղ կը նետէ,
 Ժրտորն սաստկանայ, ճայնիրն բարձրանան
 Իրարանցում մեծ, վերջապէս նոյն իսկ
 Տէրըն մեր Քրիստոս, լրտէ ներսէն զայն,
 Եւ կեսարացին կոչէ իւր ատան:
 Սա երբ կը տեսնէ, յաթու լուսեղէն
 Բազմալ Տէրըն մեր, անկանի գետին
 Չայնէ լալագին — Տէր Յիսուս փրկիչ
 Գրթա՛ եղկելոյս, քրիստոնեայ եմ
 Ութսուն տարիներ բարբարոս թըրքաց
 Լուծը կըրեցի, իբր յրիստոնեայ
 Շուրջ վաթսուն տարի խաւան տուած եմ
 Հարիւր քըսանէն ութ հազար բոյր:
 Տարին չորս հարիւր ալ պէտէլիեէ
 Ութսուն տարուան մէջ գումարը ամբողջ
 Բառասուն հազար, չորս հարիւր հատիկ
 Ոսկիներ փայլուն, գեղին, կըլորիկ:
 Եթէ սոկոսն ալ բարդելու ըլլանք
 Ութսուն տարուան մէջ շուրջ յիսուն հազար
 Հատ ոսկի կ'ըլլայ, հապա թուրքերուն
 Տուած ընծաներս, միայն երեսուն
 Միւրեքսարքիաց իւրաքանչիւրին,
 Հինգ հարիւր հատիկ, ոսկի եմ համրած,
 Պառ քեպիպ, նայիպ, սեֆքերսար, մրֆսար
 Յետին չավուն իսկ, շորթեցին զբրած:
 Եթէ այս ամենն ժողովնք, հաւաքենք,
 Գումարը կ'անցնի, մէկ միլիոն ոսկին:
 Այսչափ ըստակով, Փոքր Ասիոյ կէսն
 Ծախու կ'անէի, ես ինչո՞ւ սուրի,
 Տէր, Սուրբ հաւատքին համար չէ՞ր միթէ,
 Եթէ լինէի մի մահմուտական
 Մին մին ըստացեալ այս ոսկիները
 Տուէի երբէք . . . Գիթու թիւն, ո՞վ Տէր,
 Եւ Քեզի համար ութսուն տարիներ
 Թուրքերէն վարագ ամէն օր լուսանք,
 Անարգանք, զրկանք, ան, սարսափ հարուած
 կիրած եմ, չէ՞ բաւ որ կամիք նորէն
 Բարբարոսաց քով զրկել թշուառս . . .
 Այս մամոնական փաստարանութիւն
 Ծիծաղը շարժեց երկինց Սուրբերուն
 Միաբան ամենքն, բարեխօսեցին,
 Եւ Քրիստոս ներեց, Այսպէս մընաց անդ
 Արքայութեան մէջ, մեր Բարսեղ էմմին:

ԱԳՈՒԼԵՆՑ

Հ Ն Ո Ւ Ա Ք Ի Ր

Չամկըրդէյն, ճառախօսութեան մը մէջ
 կը բողբէ օտար մամուլին Անգլիոյ և ի
 մասնաւորի՝ Թագուհոյն գէմ՝ յարձակ-
 մանցը համար:
 Նախարարը փառաբանեց Անկլո-ամե-
 րիկեան համաձայնութենէն առաջ եկած
 բարիքները, և կ'ըսէ թէ Գերմանիա Անգ-
 լիոյ բնական զաւնակիցն է:
 — Մտատէր Բիվէր տեղի ունեցած ճա-
 կատամարտի մէջ չորս բրիտանական զօրա-

վարներ մեռած և տասնիներ վիրաւորեալ-
 ներ կան:

Այս վերջիններուն կարգէն է նաև՝
 Ժէնէրալ Մէլթոնըն, որ ազգէն թիթիկապէս
 վիրաւորուած է:

ՄԱՋԵՐՈ, 21 Նոյ. — Կը ծանուցուի թէ
 մեծ զայրոյթ մը կը ախրէ Թրանսիլաւի և
 Օրանթի կանանց մէջ, որովհետեւ իշխա-
 նութիւնք գազանի կը պահեն իրենց ունե-
 ցած կորուստներուն թիւը՝ վախնալով որ
 չ'ըլլայ թէ ներքին յեղափոխութիւն մը
 ծագի:

— Նոյ. 23ին Պօլսէն Հռոմի Թրիւպլինա
 թերթին զրկուած հեռագիր մը կ'ըսէ թէ
 իսլամ պատգամաւորութիւն մը՝ սրուն մէջ
 կը գտնուէին նաև շատ մը ազգեցիկ իշխ-
 մաներ, ներկայացրել է բրիտանական կա-
 ռավարութեան ղեկավարները ու ղեկա-
 պանին յանձնած է ուղերձ մը սրուն մէջ
 համայն Թուրքիոյ իսլամներուն համակրա-
 կան զգացումները արտայայտուած են Մեծն
 Բրիտանիոյ՝ Թրանսիլաւի պատերազմին առ-
 թիւ, պատգամաւորութիւնը խնդրած է
 ղեկավանէն, որ բարեհաճի սոյն ուղերձը
 Թագուհոյն և Բրիտանական դահլիճին
 հաղորդել:

ԻՍԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԱՐԿԻ ԶՐՈՅՑ ՄԸ

ՔԷՅՐ ԳՍՈՒՆ, 20 Նոյ. — «Քէյր Ար-
 կիւս» կը պատմէ թէ ճըճ Կրէկօսօքի ու
 քանի մը Թրանսիլաւի նշանաւոր պաշտօ-
 նեաներ Տէլաօա Ծոցն ելան, Քէյր Դաունի
 համար: Հիմա իրենց ճամբան կը շարու-
 նակին և կը կարծուի թէ իբրև պատգա-
 մաւոր խրկուած են Նախագահ Քրիւկէրէն:
 Թէ զո՞վ պիտի տեսնեն այս պատգա-
 մաւորներն՝ յայտնի չէ. բայց իրող գա-
 ղափան այն է թէ ատոնք նպատակ ունին
 խաղաղութեան պայման մը ձևաւ ձգել:
 որովհետեւ թէ՛ Նախագահ Քրիւկէր և թէ՛
 Նախագահ Շտէյն կ'զգան թէ իրենց ուժն
 չուտով պիտի խորտակի թշնամոյն մեծ
 բանակին առջև և կը բազման իրենց եր-
 կիրն ազատել ընդհանուր յարձակման մը
 ստիպումէն:

— Պէրլինի Լօֆալ Անճէյկըր թերթը մեծ
 կարեւորութիւն կուտայ պօսէրներու ապրա-
 տամբութեան, զոր Անգլիացիք իրենք իսկ
 կը խոստովանին: «Եթէ, կ'ըսէ խորհրդա-
 րանի անգամները շարունակեն հետեւիլ տի-
 րող ապստամբական հոսանքին, Ժէնէրալ
 Պուլլէր Նախալի հոգին վրայ յարձակում
 ընելէ առաջ, պէտք է մտածէ այս ապս-
 տամբութեան ջախջախումին վրայ:

— Գերմանական թերթ մը կը պատմէ
 թէ, դժտութեան ծագումէն շատ մ'ամիս-
 ներ առաջ, Թրանսիլաւի կառավարութիւնը
 հետաքրքրուած է գիտնալ 1870—71 թրան-
 քօ-Գերմանական պատերազմի պահուն
 սպառուած փամփուշտներու քանակը, որ ե-
 ղած է 18 միլիոն, ըստ այսմ 36 միլիոն փամ-
 փուշտ սպառուած է Փրէթօրիտի կառա-
 վարութիւնը:

Գովիլի հեռատեսութիւն:

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

Վսեմ Պօղոս փաշա Նուպար անցեալ
 օր քաղաքս ժամանեց իր հետն ունենալով
 Այնուափայլ Տիկինը և զաւակները:

Վսեմ Պօղոս փաշայի զաւակներէն եր-
 կուքը, որ Եւրոպայի բարձրագոյն վարժա-
 րաններուն մէջ տաման կը հետեւին, ար-
 ձակարգով քանի մը օրէն Գահիրէ պիտի
 հասնին, ձմեռուան հաճոյալի եղանակն
 իրենց սիրեցեալ ծնողացը քով անցնելու
 համար:

— Նիւ Եօրք հրատարակուող «Հայրենիք»
 շաբաթաթերթի Կ. Պօլսոյ թղթակցին գրած-
 ներուն նայելով, Գեր. Տ. Եզնիկ Եպիսկոպոս
 Ապահունիին արգիլուած է եղեր քարոզել
 ո՛րեւէ եկեղեցիի մէջ: Թէև Սրբազանը եկե-
 ղեցի գնալու ազատ է, կ'ըսէ թղթակիցը,
 միայն թէ լուռ ու մուշկ կանգնելու է Գասը
 և աղօթելու վասիշանի կենացը:

Երբ այս արժանաւոր Եպիսկոպոսին վրայ
 ի դարձ դրուած բռնապետական միջոցները
 կը լսենք, մեր յիշողութեան մէջ կ'ար-
 թընան շատ մը հին ու նոր յիշատակներ:
 Թուրքական խորամանկութիւնը ամեն
 անասնի միջոցներ ստեղծեց ու ի դարձ դրաւ,
 սպառուած տեսնելու քանի մը կարող,
 ձեռներեց, փորձառու եւ ազգասէր կղերա-
 կանաց հետքերը:

Նա տեսաւ մահը Սրուանձտեանցին,
 Նար-Պէյն, Ալէաթճեանին: Նա բանտար-
 կեց Սաղիմական խորշի մը մէջ երկաթեայ
 Պատրիարքը Ամին. Իզմիրեան և անգոր-
 ծութեան դատապարտեց: Հիմակ ալ իր
 բոլոր ուշագրութիւնը դարձուցած է ար-
 ժանաւորներու այդ վերջին մնացորդին
 — Ապահունիին — վրայ:

Եթէ թուրքական խորամանկութիւնը
 մի օր ալ այդ Եպիսկոպոսին դուրսը ուտէ,
 այն ատեն մենք իրաւունք պիտի ունե-
 նանք ըսելու թէ, Եպիսկոպոսին ալ մեծա-
 գոյն բաժինը և աշակցութիւնը նուիրած
 պիտի ըլլայ այդպիսի կարեւոր կեանքի մը
 կորստեան պատճառ դառնալու մէջ. ինչ-
 պէս ասիէ առաջ խօսուեցաւ Նար-Պէյ Սըր-
 բազանին համար: Թէ ինչպէս, պատմենք:

Նար Պէյ Սըրբազան Եպիսկոպոսի Առաջ-
 նորդ ընտրել կ'ուզուի, դաս մը ետամոններ
 կոչիկներն կը հագնին ու կիյնան ժողովրդին
 մէջ, յաջողցնելու համար ընտրութիւնը
 Գեորգ Ծ. Վ. Իւթիւճեանին (այժմ Եպիս-
 կոպոս) ու այնպէս ալ կ'ըլլայ: 3—4 տարի
 Եպիսկոպոսի մէջ Իւթիւճեանի . . . շահա-
 տակութիւնները և անօգուտ ու ամուլ պաշ-
 տօնավարութիւնը տեսնելով, 330 ստորա-
 գրութեամբ հանրագիր մը կը պատրաստեն
 և հազիւ հազ կը յաջողին դուրս ձգել
 Եպիսկոպոսի սահմաններէն ու իբր նոտի
 Եւրոպա կը ճամբեն:

Գալով Գեր. Տ. Եզնիկ Եպիսկոպոս Ապա-
 հունիին. 1897 ին քանի մը աշխոյժ անձնա-
 ւորութեանց նախաձեռնութեամբ 300 մտտ
 ստորագրութիւնք պարունակող հանրագիր
 մը կը պատրաստուի և Պառ. Երեսփոխա-
 նական ժողովոյ մատուցուելով կը խնդրուի,
 որպէս զի Եպիսկոպոսի առաջնորդ ընտրէ
 Նորին Գերապատուութիւնը:

Կարծիքները կը սարքերին, Իզմիր-
 լեանը կուզուի և միաձայն հաւանութեամբ
 թէ ձեռամբարձ քուէով Իզմիրեան կը
 ընտրուի. այս մասին պէտք եղածը արդէն

գրուած է «Արշալոյս» ի մէջ: Չախ ձև-
աւարտ քուէով ալ Այլազեանը կ'ընտրուի:
Իսկ Եղնիկ Եպիսկոպոսի համար խնչպէս
«Փարոս» ի մէջ կարգացինք, Վարչութեան
Պատ. Երեսի. ժողովը Առաջնորդի ընտրու-
թեան ձեռնարկուելէ առաջ նկատողութեան
կառնէ հանրագիրը և տեսնելով որ 200
Արաքիլացիներու (°°) ստորագրութիւնը կը
կրէ ուստի անբաւական կը նկատէ և ըն:

Ահաւաստի պաշտօնական շրջանակէ բըղ-
խած խոշոր ՍՈՒՏ մը որ «Փարոս» ի ըն-
թերցողներուն կլլեցնել ուղուեցաւ և պատ-
ճառ պիտի դառնայ ա՛յնչպիսի օգտաշատ և
իր տեսակին մէջ արժանաւոր ու կարևոր
կեանքի մը ոչնչանալուն . . . : Մենք այս
կարգի խնդիրներու վրայ դեռ շատ բաներ
ունինք բռնելու, բայց իւրաքանչիւրը իւր
ժամանակին: Միայն կարևոր կը դատենք
հրապարակաւ հրաւեր ուղղելու Ազգային
Առաջնորդարանի պաշտօնէից և Վարչու-
թեան, որ եթէ մեր այս բաժնետերուն զէմ
առարկութիւն կամ հէրքում ունին, զրկեն
մեզի. մեր թերթին սինտիները ճշմարտու-
թեանց առջև միշտ բաց են:

ՄԻԱՄԵԱՅ ՀԱՇՈՒԵԿՇՈՒ

ՆՈՐԱԿԱԶԻ ԱՂՔԱՍԱՆՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
Դահիրէի Հայոց (1898 — 1899)

Table with 2 columns: Description and Amount. Includes items like 1898 սեպտեմբեր 7էն մինչև 1899 օգոստոս 31 ծախում 1508 հատ բաժնեգին 3016, Զանազան բարերարներէ նուէր 382, Եկեղեցիին բալը գրուած պնակէ հասոյթ 2371, Թատերական ներկայացումէ դոյացած հասոյթ 923 25, Վիճակահանութենէ գոյացած հասոյթ 1146 25, Նուիրատուութիւն Վսեմ Պօղոս փաշա Նուպարի 1950, Գումար 9788 50

Table with 2 columns: Description and Amount. Includes items like Ե Լ Ք Ազգասիրտ տրուած սնունդ 2176, Դիւանական ծախք 1270, 276 զեղագրի շինողչէք 942 75, Ընկերութեան գրագիր Ռուբէն Փափազեանի 7 ամսական վարձք և իւր մասնաւոր աշխատութեանց 1159, Նախորդ հաւաքիչ Բագանճեանի 240, Ներկայ հաւաքիչ Պ. Սաչիկ Փափազեանի 475, Թատերական ներկայացումէ մնացած դանազաններէ պահանջք 900, Վիճակահանութեան ասթիւ մնացած պահանջք 75, Զանազան ծախս 185, Մնտուկը պատրաստ դրամ 2355 75, Գումար 9788 50

Դահիրէ 28 նոյ. 1899
Ի դիմաց Ընդհ. ժողովոյ
Ատենադպիր Ատենապետ
Գ. ՍԱՐԱՅԵԱՆ Ս. ՖԷԼԷԿԵԱՆ

Ազգատանամ Ընկերութեան Ընդհան-
ուոր Դիւանն տարեկան ելլեմուսի հաշուե-
կիւնն ի գիտութիւն ազգայնոց հրատարա-
կութեան տալէ վերջ, կը ծանուցանէ արգոյ
բաժանողաց թէ՛
Առաջիկայ կիրակի դեկտ. 3 կէս օրէն
վերջ Ընդհանուր ժողով պիտի գումարուի
Եկեղեցւոյ շրջափակի Վարժարանին որահը և

Օրակարգը պիտի ըլլայ
1. Ընտրութիւն Գործադիր Ժողովոյ
պակասեալ անդամոց:
2. Միամեայ հաշուեկիւն:

Յարգւոյ ընկերակիցնք ինչ կը խնդրուի
որ ներկայ գտնուիլ ջանաւն, որովհետեւ
ներկայից թիւը մեծամասնութիւն համարե-
լով գործողութեան պիտի ձեռնարկուի յօ-
գուտ ընկերութեանս:

Ի դիմաց Ընդհ. ժողովոյ
Ատենադպիր Ատենապետ
Գ. ՍԱՐԱՅԵԱՆ Ս. ՖԷԼԷԿԵԱՆ

Մ. Ս. — Պատ. Դիւանին ուշադրութեան վը-
րիպած է թէ կիրակի դեկտ. 3 Լսարան-Ընթեր-
ցատան առջին լսարանը պիտի տրուի Ա. զու-
Սալիլի թատրոնին մէջ և թերեւս Ազգատանամ
ընկերութեան բաժանորդներն մեծաւ մասամբ
լսարան յաճախելով բացակայ մնան: Քանի որ ժամն
ալ նշանակուած չէ յայտարարութեան մէջ:
Կը լսենք թէ Ազգատանամ ընկերութեան
Գործադիր ժողովոյ սարեկան հաշիւները և գոր-
ծողութիւնները քննելու համար «Քննիչ յանձնա-
ժողով» մը կազմուած էր: Պատ. Դիւանը այդ մասին
իր նամակին մէջ բան մը չ'ընչատակէր: Լաւագոյն
չէ՞ր որ Քննիչ յանձնաժողովին տեղեկագիրը հրա-
տարակութեան տրուէր, որպէս զի ամեն ոք ազ-
գատանամին վրայ յստակ գաղափար կազմէր:

Ա. Զ. Գ.

Լսարան-Ընթերցատան Ա. լսարանը
պիտի տրուի յառաջիկայ կիրակի, 3 դեկ-
տեմբերին, յետ միջօրէի ժամը 2ին, Ազու-
Սալիլի թատրոնին մէջ, ուր պիտի բանա-
խօսէ Տիար Կարապետ Պապայեան, իրըն-
անդամնիկ ատենաբան, նիւթ ունենալով
ԳԻՒՂԱՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ:

Այս առթիւ կը յայտարարենք Պատ.
հասարակութեան թէ՛ Լսարանի մուտքն
ազատ է, և հետեւաբար պարտականութիւն
կը դնենք երկուսեւ ժողովրդին վրայ իւր
պատուաբեր ներկայութեամբ քաջալերել
նորակազմ ընկերութիւնս:
Դահիրէ 29 նոյ. 99

Մնամք յարգանք
Ի դիմաց Լսար. Ընթերց. Գործ. ժողովոյ
Ատենադպիր Ատենապետ
Հ. ԱՂԱՏԵԱՆ Ս. ԲԻԻՐԱՏ

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Նորին Բարձր. Խորիլը անցեալ հինգշաբթի
նրեկոյ ներկայ էր Լէյլեր իլ Միւսակ կրօնական
արարողութեան, որ տեղի ունեցաւ Սէյիսնա Հիւ-
սէյի մզկիթին մէջ:

— Վսեմ Պօղոս փաշա Նուպար հինգշաբթի
առաւօտ այցելութիւն տուաւ Նախարարաց:

— Նախարարաց ժողովը որոշած է Իս. Էն-
տէր փաշա Ֆէյմին, ի դիմաց Եգիպտական երկա-
թուղւոյ վարչութեան պատուիրակ կարգել հա-
մազգային Վեհաժողովին, որ 1900ի Սեպտեմբեր
ամսոյն մէջ ի Փարիզ տեղի պիտի ունենայ:

— Ուրիկէթ փաշա, տիրահոջակ Խալիֆա
Մահտիի փոտապանձ յաղթողը, ուրբաթ առաւօտ
Դահիրէ հասաւ և շատ քաղաքալարական ըն-
դունելութեան մը արժանացաւ:

— Եգիպտական կառավարութիւնը Հանրային
պարտուց վարչութեան սնուակէն 9000 ոսկիի
գումար մը պահանջած է, Քարնաքի սաճարին
վերանորոգմանը համար:

— Պօղոս պէյ Յակոբեան, Դահիրէի Դատաւ-

ւորաց կայանին երկրորդ պետը, Ազգատանորդի
Վերադարձի ատենին մէջ փոխադրուած է:

— Անցեալ շաբթու ժամտախտէն 196 նոր
դէպք և 137 մեռեալ պատահած է ի Պէմպէ. իսկ
Նախընթաց շաբթուն մէջ 130 դէպք և 107
մեռեալ:

— Կ. Պօլսէն Հավասի գործակալութեան առ-
նուած լուրի մը համաձայն, անցեալ կիրակի օր-
ուան բանտարկեալներու շարքին մէջ կը գտնուի
Նաեւ Սայիտ պէյնախաբատ ատենի նախագահը,
որուն համար կ'ըսուի թէ Սուլթան Մուրատի
բանտապահին հսկողութեան տակ է, մասնաւոր
տանջանքներու ենթակայ:

Սայիտ պէյ, իւրամագղին նշանաւոր պարու-
ւագիրներէն մին է և բազմամուտ երգիծարան
փելիտփայ մը, հանրածանօթ անձնաւորութիւն
մը և միւսնոյն ժամանակ որդին է Պէրլինի նախ-
կին հիւպատոսին: Սայիտ պէյի բանտարկու-
թիւնը և խոշտանկումը խիստ յոռի տպւորու-
թիւն թողած է Պօլսոյ այն լուսաւորեալ շրջա-
նակներուն մէջ, որոնց համար ապահովութիւնը
բացակայ է:

Վերջին պահուն անուած տեղեկութիւննե-
րու համեմատ, Սայիտ պէյ, Ֆէրիտ պէյ՝ որ խոր-
հրդական մ'է, ինչպէս Նաեւ Ելիս-Իւլիսլամաթէն
իւլէմա մը, Նոյեմբեր 20ի զիջելը Նաւ գրուելով
Հարաւային Ափրիկէ տարագրուած են:

ԴԵՍ ՈՒ ԴԵՆ

Զուրիցերի մէջ գեղեցիկ ձայն ունեցող
կաթնավաճառն աւելի կը շահի, որովհետեւ
գեղեցիկ ձայնով երգելով կը կթէ, ու կոփն
հաճութիւն զգալով՝ աւելի կաթ կուտայ
եղեր:

— Ամերիկայի Նիւ-Եորք քաղաքին մէջ
կառավարութիւնն 10 ակուն տուր կուտայ՝
երկու աչքէ զուրկ և գործելու անկարող
մարդոց:

— Բժիշկը կը հաւաստեն թէ՛ ծխա-
խոտի հոտն, իւր մէջ պարունակած միք-
րայնէրէն յառաջ կ'ուզայ:

— Զկան միսն՝ եզի միսէն տասն ան-
գամ աւելի օգտակար և սննդարար նիւթ
կը պարունակէ եղեր:

— Ոտքի վրայ կանգնող անձի մը
սիրտն՝ պառկած ժամանակէն 10 անգամ
աւելի կը բաբախէ:

— Միամի պաշտօնեաներու երգման
ձևն է. «Եթէ հաւատարմութենէ շեղիմ՝
տրինս գուրս պօսթիլոյ մարմնոյս ամեն
կողմերէն. կայծակը երկու կտոր ընէ մար-
մինս. պիս կոկորդիլոսներն ուտեն. դժոխ-
քին մէջ անտակ գոյնըով ջուր կրելու դա-
տապարտութիւն: Մահուրէն վերջը հոգիս
գերիի մը մարմինը մտնելով՝ անապատի
աւազներու, ծովու ջուրերու կաթիլներու
չափ տարիներ շարժարանաց ենթարկուիմ՝
կոյր, կաղ, խուլ ու բորոտ մուրացկանի
մը պէս դարձեալ այլսարհ գամ և վերա-
դառնամ դժոխքս:

— Գաղղոյ օտտիկանութեան պաշտօն-
եայ մը, յենլով իր անձնական փորձերուն
կը ծանուցանէ թէ՛ օտտիկանութեան պաշ-
տօնէից կողմանէ հետապնդեալ յանցաւորք
չատ քիչ անգամ ձախ կողմը և գրեթէ
մէշտ ալ կողմը կը փախչին և այժմ զայս
դիտող պաշտօնեայք կը յաշոյնն ձերբա-
կալութեան գործին մէջ:

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԱԹ 1 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1899

Ա. Թիւ	7252	շահած է	Ֆրանք	1000
Բ. "	7363	"	"	200
Գ. "	9193	"	"	100
Դ. "	5338	"	"	50
Ե. "	291	"	"	50

Հիտեւալք 25 ական ֆրանք կը շահին

3389	8691	3882	1386	7180	4526
2142	3546	3417	6529	4653	6076
7739	44	5756	4405	656	5017
	6894	8865	6312	8929	

ԾԱՆՕԹ. — Այն շահող թիւերը որոց վիճակեալ պարգևներն ութը օրէն չեն գանձուիր, Բնկերութեան մատուցին սեփականութիւնը կը լինին:

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՆԱԻՐ ԴԱՍԵՐ

ՉԱՓԱՅԱՍՆԵՐՈՒ ԶԱՄԱՐ

ՀԱՅ ԱԻԵՏԱՐ. ՎԱՐՓԱՐԱՆԻՆ ՄԷՋ Ի ՏԱՂՈՒՏԻՅԷ

Դասաւանդութիւնը սկսած են նոյեմբ. ամսոյ 6 էն սկսեալ՝ Երեկոյնը ժամը 7 էն մինչև 9 1/2 և կ'աւանդուին Անդգ. Գաղղ. Արաբերէն և Հայերէն դասեր:

ՎԿԱՅԵԱԼ ԱՂԲԱՏՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԻՔ ԶՐԻ ԵՆ

Դիմել առ Մ. Յ. ԳՆԱՃԵԱՆ Հիմնադիր-Տնօրէն Հայ Աւետարանական վարժարանաց:

ՀԱՅՎԱՋԵԱՆ ՓՈՒԻ

Փոզգի Պաֆ վանաւասան մօտեր, Կամե-էլ-Պեմաքի Եիւս դիմացը

ԵԿԱԻՅՑ ԵՒ ԸՆԿ.

Պատիւ ունին յայտարարելու թէ, վերջերս իրենց նոր բացած փութին մէջ, անխորհրտ աւելի կը պատրաստուի ԳԱՂՂԱԿԱՆ, ԱՆԳՂԻԱԿԱՆ, ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՅՈՒՆԱԿԱՆ հացեր: Սուրճի, թէյի և կաթի պարսիմաններ, և այլն: Եկաւօֆ և Ընկերութիւն մեծ ջանք և հոգածութեան պիտի ունենան իրենց դիմող բոլոր յաճախորդներն ըստ ամենայնի գոհացնելու: Յանձնարարութիւնը ամենայն ճշգրտութեամբ և փութով կը կատարուին: 10—50

ԱՐԵՏԻՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Կ. ՊՕԼՍՈՅ ԿՕՇՎԱԿԱՐ

ՇՈՒՊՐԱ — ԿԱՄՈՒՐՁԻՆ ԴԻՄԱՅ — ՇՈՒՊՐԱ
Չարաչոր Սօզաղը

Ֆրանսական և ռուսական ընտիր ապրանքներուն ամենէն տոկոսները կը գործածէ միշտ:

Արուեստին մէջ ունեցած հմտութիւնը ամեն տարակոյտէ վեր է:

Իրեն պատրաստած ճաշակաւոր ու ձեւաւոր կոշիկները բոլոր յաճախորդաց գոհունակութեան են արժանացած:

Չեւաւոր և տոկոս կոշիկներ ունենալու փափաքողը՝ Երբ առաջին անգամ հոն դիմէ, շատ գոհ պիտի մնայ և անպատճառ մնայուն յաճախորդ պիտի արձանագրէ ինքզինքը: 3—50

ԼԵՒՈՆ ԿԻՄԻԻՇԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ

Վ. Ա. ՀԻՐՔԷ, — Մուսի փողոց, — Գ. Ա. ՀԻՐՔԷ
Ս. և Ս. Սեմալիի վանաւասան դիմաց

Վերջերս հաստատած իւր վաճառատան մէջ կը գտնուի պատի և քօնօսի ընտիր տեսակէ բանախելներու մեծ մթերք:

ԴԻՄԵՑԷ՛Ք ՀՈՆ և սիրտի գտնէք ամէն ճաշակի յարմար զանազան տեսակ արանց և կանանց ժամացոյցներ, աղամանաղաւոր, ոսկի, արծաթ և ցիւրի:

Ֆրանսական և ամերիկեան ապրանքամե- նարնտիր տեսակներէն զարդեղներ, շրթաներ, օղեր, մասանիներ և այլն:

Ամէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն ծանօթ ժամագործի մը միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ԶԱՓԱԻՈՐ

ՏՕՐԵՔՐ ԺՕՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Ապսին, Շարե Բուպրի, Բիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ աղաներ:

Կը դադրեցնէ վայրկենապէս աղուայի ցաւերը ամերիկեան նորագոյն մեթոտով իւր պատրաստած գեղերով:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած աղաներուն տոկոսնութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ: 4 3—10

ՏԻԿԻՆ ՄԱՐԻ ՊՕՂՈՍ

ՄԱՆԿԱԲԱՐՁ Վկայեալ տեղական կառավարութեան և բժշկական վարժարանէն

Իւր բնակութիւնը հաստատած է Ի Շարա Ապտիւ-Աղբ, Ալի փաշա Շէրիֆի պարտիզին դիմաց:

Երկար ժամանակ իւր արհեստին կիրարկութեամբ ստացած փորձառութիւնը և տեղական կիրմայի պահանջներուն մասին ունեցած գիտակցութիւնը կարեւոր առաւելութիւններ են:

Իրեն դիմողները կատարելապէս գոհ պիտի մնան: 23—24

ԱՍՏԻԿ ԷՍՄԷՐԵԱՆ

Կ. ՊՕԼՍՈՅ

ՀԱՅ ՔԻՒՐԲՅԻ ԱՐԶԵՍԱԽՈՐԵՐԷՆ ԱՌԱՋՆԱԿԱՐԳԻ

ՇՕՐԱ ՄՈՒՀԱՄՄԷՏ ԱԼԻ

Սմեն տեսակ հին և նոր մուշտակները եւրոպական և թուրքական ճաշակով ձեւեր կը բերէ և նորի կը վերածէ:

Իրեն դիմող յարգելի յաճախորդները պատրաստ պիտի գտնեն նաև մուշտակ օձիքներ և շն:

Անոնք որ իրենց հինցած մուշտակները տանը մէկ անկիւնը նետելով ցեցերու կեր կ'ընեն, կրնան այս առիթէն օգտուիլ: 6—8

Հ. ԱԶԱՏԵԱՆ

ՂՈՒՐՐԻԷ, ՎԷՔԱԼԷՓ-ԷԼ-ԱՍԱՊԻ ԿԻՑ

Կը ծախուի ընտիր տեսակէն մազի ներկ (բատուր) սև, շագանակագոյն և ոսկե գոյն:

Սեւ ներկ շիշով վայրկենապէս սեւցնող: Սոյն ներկերու տեւողութիւնը մէկ ու կէս ամսուայ համար երաշխաւորեալ է:

ՀՐԱՇԱԼԻ ԶՈՒՐ ՄԸ

Հերթափոխութիւնը կը դադրեցնէ և մազերը կը ճոխայնէ: Նմանապէս ճաղատ (տաղ) գլուխները մազ կը բերէ. 17 տարուան ճաղատ գլուխներու վրայ փորձուած և հիանալի արդիւնք աւանուած է: Շիշը 10 զրշող (2 1/2 ֆրանք):

Վերոյիշեալ ջուրէն կը գտնուի նաև Աղէք-սանդրիա Միքըէ-Կէսիտ մանրավաճառ Պ. Լեոն Ասլանեանի մօտ:

Աղուայի փոշի և ջուր. մին մաքուր և ճերմակ, միւսը հիւանդութիւններէ զերծ պահող և ամրացնող:

Թող փութան օգտուիլ այն անձինք՝ որոնց գլխու մազերն սկսած են տակաւ առ տակաւ թափիլ և օր մը ճաղատ ըլլալու վտանգին ենթարկուած են:

Կը գնենք, կը վաճառենք և կը փոխանակենք բոլոր ազգաց գործածած նամակազրոյմները: 3 8—8

ՏՊԱՐԱՆ-ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ
Ի Գ. Ա. ՀԻՐՔԷ
ՇԱՐԱ ՄՕՉԱՄԷՏ ԱԼԻ (ՀԱՊՊԱՆԻՅԷ)

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ պատիւ ունի յայտարարելու թէ, յետ այսու ամէն օր առաւօտեան ժամը 7 էն մինչև երեկոյան ժամը 8 ը, պիտի գտնուի իւր ճպարանին մէջ և պիտի ընդունի ամէն լեզուէ տպագրական ամեն կարգի և տեսակի յանձնարարութիւններ: Ինչպէս՝

Շրջաբերականներ, Մահազդեր, Հրախրագրեր, Այցեխարտեր, Յանկեր, Գիտեր, տեղեկագրեր, Հաշուեցոյցներ, Կանոնագրեր, Տոմարներ, Ընկերութեանց և վաճառականներու սյազրական ամեն պիտոյցներ:

Իւր ապարանին մէջ եղած նորանոր կարգապարտութեանց շնորհիւ կը խստանայ յաճախորդները ըստ ամենայնի գոհացնել գործերու մաքրութեան, ճշգրտապահութեան և գներու չափաւորութեան մէջ:

Եգիպտոսի ո և է քաղաքէն կամ գիւղէն եկած յանձնարարութիւնները ամենայն խնամք և փութով կը կատարուին:

Տպագրութիւն Ս. Ա. ԴԱՐԲԻՆԵԱՆ
Le Gérant Dr A. S. HAGOPIAN